7. ՀՈՐ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ

Կար ժամանակով մի քաղքում մի դուքանտար, երևելի մարդ։ Էդ մարդին մի հատ տղա ուներ, էդ տղին կանչեց, ասեց.

— Տղա՛, արի՛, իմ մահը մոտ ա, արի քեզ խրատ տամ, ա՛յ որդի,— ասեց,— հոր խրատ բռնողը մաղբուն չի մնա։ Առաջին խրատս էն ա, որ ժամը տան՝ ինչ բան ունենաս կթողես կէթաս քու ժամը. մեկ էլ՝ ինչ տեղ ըլլում ա, ըլլի, որտեղ մթնի՝ էնտեղ կմնաս։ Վերջն էլ՝ ինչ ջուր կտեսնաս, առանց վալատի անց չես կենա։

Մի ժամանակ մնաց, հերը մեռավ։ Տղեն էկավ, իրա դուքանը նստեց, մտիկ արեց տեհավ, որ իրա ընկեր կողքի դուքանչիքը պատրաստութուն են տեսնում, որ էթան Թիֆլիզ։ Գնաց, տղեքին հարցրեց.

— Էդ ո՞ւր եք գնում։

Ասեցին.— Էթում ենք Թիֆլիզ ապրանք բերելու։

Ասեց.— Ընձի էլ կտանե՞ք, ձեզ հետ դամ։

Ասեցին.— Խի՞ չենք տանի, քու փողովը կգաս, մեր վրա ծանրութուն չի, պատրաստվի, որ առավոտը գշերով դուս ենք գալի։

Դուս էկան ընկան ճանապարհ. գնացին, գնացին, հասան Թիֆլիզ։ Առուտուրն արեցին, իրանց բեռները բեռնեցին, ընկան ճանապարհ։ Իրիկվա զանկերը քաշեցին, էգ տղեն իրա ընկերտանցը ասեց.

— Տղե՛ք, կաղնեք, բան եմ ասըմ։

Ասեցին.— Ի՞նչ ես ասըմ։

Ասեց.— Իրիկվա զանկերը քաշեցին, էթանք ժամ ու ժամուց դուս գա՛նք, բեռները քշենք էթանք։

Ընկերտանքը ասեցին.— Հո գիժ չե՛ս, չարի էթանք ժամ, գանք, մեկ փոշտ ճանապարհ կէթանք։

Էդ տղեն ասեց.— Իմ հոր խրատը չեմ կորցնի։

Ընկերտանքը բեռները քշեցին, գնացին. էգ իրա բեռները կաղնացրեց, գնաց ժամ, ժամիցը դուս էկավ, իրա բեռները նոր քշեց, էկավ էրկու օր, անճախ հասավ իրանց գետան ղրաղը։ Տեհավ՝ իրան ընկերտանքը կեսը ըսդին ա, կեսը ընդին ա, հարցրեց.

Ասեցին.— Հոզը էկավ մեր գլխին, ընկորտանցից ո՛ըր ջուր տարավ, որը հեղդվեցավ, որի բեռները տարավ։

— Էնենց մարդ չկար ձեզի անց կացներ։

Ասեցին.— Ո՞վ ա տվե ընենց մարդ, որ անցկացնե։

Իրա նոքարներին ասեց.— Բեռները վեր ածեք, ժաժ չգաք, չարի ես էթամ գեղ ու զամ։

Գնաց գեղը, հարցրեց.— Էս ջրին լավ վալատ կրլլեք, ո՞վ ա լավ լեղվոր, ինձ ասեք։

Ասեցին.— Ըստի մի տղա կա, լավ լեղվոր ա։

Ասեց.— Էն տղին կանչեք գա իմ մոտը։

Գնացին կանչեցին՝ էկավ, ասեց.

— Ախպե՛ր, ի՞նչ ես ասըմ։

Ասեց.— Էս ջրին մենք վալատ չենք, ի՞նչ ես ուզում որ էս ջուրը մեղ անցկացնես։

Ասեց.— Տեսնում ես, ջատ մարգեր վնասվել ա, քսան մանեթ փող կառնեմ, կանցկացնեմ։

— Դե՛, արի՛,— ասեց,— քսան մանեթ կտամ, անցկացրա։

Էկան, գետան ղրաղը կաղնեցին։

Ասեց.— Շորերդ հանա՛, մտիր գետան մեջը՝ գնա՛, արի՛, որ ճանփեն իմանանք, դենը անց կենանք։

Մտավ մնչը չորս անգամ գնաց էս ղրաղը, էն ղրաղը, ասեց,— Դե՛, բեռները քշեք, ճանապարհը գթա։

Բեռները քշեցին սալամաթ անց կացան էս էրեսը։

Տեհան մի մեծ բազիրկյան ըդի վեր ա էկե։ Էդ բազիրկյան բաշին էգ տղին կանչեց. դնաց ասեց.— Աղա՛, ի՞նչ պրտի ասես։

Ասեց.— Ըստե հաղար մարդ վեր են էկե, մեկը քու խելքը չուներ։ Դու ո՞րդուց ես։

Ասեց.— Ես էրեվանցի եմ, Վաղարշապատից։

Ասեց.— Ա՛յ որդի, ես էլ Գյանշեցի եմ, տենը՞մ ես իմ ապրանքը, քսան հաղար մանեթի կըլլի. որդի՞, քո՛ւ ապրանքը բանի հազար մանեթի կըլլի։

Ասեց.— Իմը էրկու հազար մանեթի ա։

Ասեց.— Դու իմ աչքին դիր էկար, կուզե՞ս որ իմ քսան հազար մանեթի ապրանքը քու էրկու հազար մանեթի ապրանքի հետ գնեմ, ընկեր անեմ քեզ։ Ես իմ մայեն վեր կալեմ, դու քու մայեն, ինչ որ դատենք, հալալ կիսենք։

— Աղա՛, որ ըդենց անես, ես շատ շնորհակալ կըլլեմ քեզանից։

Լեղվորին ասեցին.— Արի՛, մեր բեռները անցկացրա էն դիհը։

Ասեց.— Աղա՛, քսան մանեթ բարըշել եմ՝ անցկացնեմ էն դիհը։ Հրմի էն դնով չեմ անցկացնի, տենըմ ես, որ արին ա բերրմ շուրը։

Ասեց.— Որդի՛, անցկացրա, մի զատ էլ ավել կտանք։

Բոնեց, ամենն էլ սալամաթ անցկացրեց էն էրեսը։

— Քսան մանեթ բարիշել են,— ասեց,— ա՛ռ քե եռեսուն մանեթ։

Ասեց.— Շատ շնորհակալ եմ, բարի ճանապարհ ձեզ։

Գնացին, դուս էկան Գյանշվա քաղաքի ղրաղը։ Էնտեղ մի քար կար, անունը Նալլեթ տաշի[1] էր, բեռները էն քարի մոտ վեր քցեցին։

Բաղիրկյան բաշին մի հատ թուխտ գրեց, ասեց.

— Կտանես իմ տունը, թուխտը կտաս իմ կնկա՛ն, իմ կնիկը կկարդա, դուքանի բանալիները կտա քեզ, կգաս դուքանը բաց կանես, մեշը կսրբես, նստես ընտե, չարի ես կգամ։

---

[1] Անիծյալ քար (Ս. Բ.)։

Թուխտը վեր կալավ ու գնաց, հարցրեց բազիրկյան բաշու տունը, գթավ, թուխտը տվեց բազրկյան բաշու կնկանը, կնիկը կարգաց, ասեց.

— Ո՛րտե վեր ա էկե։

Ասեց.— Քաղաքի ղրաղը։

Էն սրհաթին էն կնկա աչք ընկավ էդ տղին։ Բանալիքները տվեց տղին ու ձեռները բռնեց հուպ տվեց, ասեց.

— Ա՛յ տղա, դու տղամարդ չե՞ս։

Ասեց.— Ի՞նչ տղամարդ։

Ասեց.— Ես ինչ որ ասեմ, դու ինձ լսես՝ ես քեզ լավ կպահեմ։ Քու աղեն էթում ա՝ էրկու տարով, իրեք տարով չի գալի, ես քեզ իմ ծոցի մեջը կպահեմ։

— Չէ՛, խանում, թող տո՛ւ էթամ, հըմի աղեն կգա։

Ասեց.— Ա՛յ տղա, ի՞նչ վռազ էթում ես, ինչ որ ասեցի, դու բան չհասկացար։

Ասեց.— Քու ասութունները ամեն ես հասկացա, էդ բանի տերը չեմ։

— Ո՛ր տերը չես, կորի՛, գնա՛։

Էդ տղեն էկավ, դուքանները հարցրեց՝ գթավ, դռները բաց արեց, ավելը վեր կալավ, թամուզ սրբեց, ջուր բերեց, ջրջրանեց։

Տեհավ աղեն էկավ, ասեց.— Ջորանա՛ս, լավ ես արե։

Ապրանքը քաշեցին նեքսև, պրծան։

Ասեց.— Ա՛յ տղա, դու առուտուր արա, ես էթամ, մի տուն դիպչեմ։

Գնաց տուն։ Կնկա հետ ձեռ բռնեց, բարևեց ու նստավ։

Կերան, խմեցին, քեֆ արին։

Էդ տղեն սկսեց առուտուրը. սաղ քաղաքը ըդրա վրա թեքվավ, մի երեք ամիս մնաց։

Բազրկյանի կնիկը ասեց.— Էն ինչ տղա ա՝ դուքանը ղըրել ես։

Ասեց.— Էրևանցի ա, ընկեր եմ արել իմ հետ։

Ասեց.— Խի՞ չես ղրկում տուն, տունը ճանաչի, էթա, դա։

Գնաց դուքանը, տղին ասեց.— Գնա՛, տանը հաց կեր էս օր։

Տղեն էկավ տուն, տեհավ խանումը մի լավ պատրաստություն ա տեհե։

— Դե,— ասեց,— բարև ես էկե, հա՛զար բարև, ըտեղ նստի։

Նստացրեց ու հացը քցեց, կերակուլ քաշեց, գինի գրեց. կերան ու խմեցին, քեֆները լավացավ։

Կնիկն ասեց.— Ա՛յ տղա, ես քե հետ պըտի նստեմ ու կաղնեմ. իմը ղու ես, ես քոնն եմ։

Տղեն ասեց.— Անկարելի՛ ա, չի ըլլի՝ քե պես հազարն ըլլի, ինձ պետքը չէ։

Ասեց.— Իմ ձեռից չես պրծնի, ո՞ւր պըտի էթաս ըսօր դու։

Ասեց.— Մի կտոր հաց տվեցիր, պըտի հարամե՛ս իմ վրա։

Ասեց.— Որ ըգենց ա, ափսոս ա հացը ուտես, դե վեր կալ գնա՛։ Դե յալլա՞։

Տղեն վե կացավ, գնաց դուքանը։

Բաղրկյանը հարցրեց.— Ա՛յ որդի, հաց կերա՞ր։

Ասեց.— Շատ շնորհակալ եմ, օջաղդ հաստատ ըլլի։

— Դե՛,— ասեց,— նստի դուքանը, ես էլ էթամ հաց ուտեմ։

Բաղրկյան էկավ տուն, ասեց.— Ա՛յ կնիկ, հաց բեր։

Կնիկը հաց բերեց, քցեց աղաքը. տեհավ կնկա նոթերը կիտած ա, ասեց.— Ա՛յ կնիկ, քեզ ի՞նչ ա էլե՝ նոթերդ կիտել ես։

Ասեց.— Չի կիտեմ՝ բա ի՛նչ անեմ, դուն էլ գնացել մարդ ես գտե, քեղ ընկեր ես արե։

Ասեց.— Ի՛նչ կա, էդ լավ մարդ ա։

Ասեց.— Ո՛նց լավ ա, գալու օրը ձեռներս բռնեց ու ճմռեց, ըս օր էլ էկավ, հաց դրեցի որ ուտեր, յախես բռներ ա հախ ու նհախ էս բանը պըտի ըլլի, որ մեկ էլ էկել ա տունը, ի՛նչ օյին ասես, իմ գլուխը կհանի։

Բաղրկյանը ասեց.— Որ ըդենց ա, էթամ դուս հանեմ, էթա։

— Դուս հանես, իմ անըմը կըտա։

Ասեց.— Բա ի՞նչ անենք։

— Քեղ փռի դուքան ունես, փռնչուն թամպահ արա. «Գշերն ո՛ր էն տղին ղրկեմ, ի՞նչ վախտ որ էկավ, քցեք փուռը, թո վառի, վերջանա»։

Բաղրկյան բաշին գնաց փռնչուն, ասեց.— Փռնչի՛։

Ասեց.— Համմե, աղա՛։

Ասեց.— Գշերվա կիսին ո՛վ կուդա, կասի. «Բանը պատրաստ ա, ո՛ր աղեն ասել ա ձեզ»։ Հենց կբռնեք, քցեք փուռը, ո՛վ կըլլի՝ կըլլի։

Գնաց դուքանըմը նստեց, ասեց.— Ա՛յ տղա, կէթաս փուռը կասես. «Աղեն ասըմ ա, էն բանը պատրաստ ա»։

Ասեց.— Շատ բարի՛, կէթա՛մ։

Աղեն գնաց տուն, կնիկն ասեց.— Թամպահ արի՞ր։

Ասեց.— Թամպահ արի։

Լսի դեմը վե կացավ, ասեց.— Ծտացել եմ, էթամ։

Գնաց, հասավ փռի դուռը. դուռը շինած էր. մի քար վե կալավ, որ դուռը ծեծի, հենց ժամի զանկը քաշեցին. ուսուլով քարը վեր դրեց դռան աղաքը, ասեց. «էթամ ժամը՝ դամ ու ասեմ»։— Հորը խրատը պահում ա։ Գնաց ժամ։

Բազրկյանի կնիկն էլ էթում էր ժամ. էկավ, փռի դռնովը անցկացավ ասեց.— «Փռնչուն հարցնեմ, տենամ կատարել ա իրիկվա խոսքը»։ էկավ, մտավ փուռը, փռնչուն ասեց.— Իրիկվա ասած խոսքը կատարե՞լ եք։

Փռնչին ասեց.— Մոտ արի՛, տենամ ի՞նչ ես ասըմ։

Մոտ գնաց, էլ չխոսացրեց. բռնեցին, կոխեցին փուռը։

Տղեն ժամիցը դուս էկավ, էկավ փռնչու մոտը, ասեց.— Աղի խոսքը կատարել ե՞ք։

Ասեց.— Գնա՛, արխային կաց, կատարեցի՛նք։

Տղեն ետ դառավ, էկավ դուքանը բաց արեց, նստավ։

Աղեն վեր կացավ, էկավ դուքանը։ էկավ, տեհավ տղեն դուքանըմը նստած ա, ասեց.— Ա՛յ տղա, ախր ես քե բան թամպահ արի. գնացի՞ր փռնչու մոտը։

Ասեց.— Գնացի, ասեցի փռնչուն. «Աղի՛, թամպահ արած բանը կատարե՞լ եք». Փռնչին ասեց. «Կատարել ենք»։

Էն աղեն վեր կացավ, իրա մեղքն ասեց. «Բա՛ լիրբը տղիցը թեզ ա գնացել»։ Վեր կացավ, դպա տուն ղնաց։ Տեհավ կնիկը տանը չի, գնաց դպա փուռը, փռնչուն ասեց.— Իմ ասածը կատարեցի՞ք։

Ասեց.— Կատարեցի՛նք։

Ասեց.— Ո՞վ էր, որ կատարեցիք։

Ասեց.— Քու կնիկդ էր։

Դառավ ետ, գնաց դրպա դուքանը։ Գնաց դուքանը, տղին ասեց.— Արի ըստեղ, արի ղրուստն ասա, էրեկ որ գնացիր տուն, ինչ պատիվ առար։

Ասեց.— Պատվիցը շնորհակալ եմ, ամեն տեսակ բան էլ կար.

Ասեց.— Էդոնք թո մնա, կնկանս ի՞նչ ասեցիր։

Ասեց.— Աղա՛, ես բան չասեցի, ինչ որ ասեց, քու կնիկն ասեց։

Ասեց.— Ի՞նչ էր ասըմ։

— Ասեց. «Աղեդ կէթա՝ ամսով, էրկու ամսով չի գա, ես քունն եմ, գու իմն ես». ես անկաջ չարեցի, թողացի, վեր կացա. իմ վրա բարկացավ, ես էլ էկա դուքան։

Ասեց.— Որդի՛, որ ըդենց ա, իրա եղովը տապակվեց. արի հաշիվ աննք, քու հաշիվն ա՛ռ, աստված քու հետ, բարի ճանապարհ ըլլես, ես էլ դուքանները պըտի ծախեմ, էթամ ուրիշ երկիր։ Էդ տղեն իրա փայն առավ ու ընկավ ճանապար. էկավ, մի քաղաքի ղրաղ դուս էկավ։ Արևը մտավ, ասեց.

— Բեռները վեր ածե՛ք։

Ասեց.— Աղա՛, խի վեր ածենք. քաղաքը մոտ ա, էթանք քաղաքը։

Ասեց.— Անկարելի ա, իմ հերը խրատ ա տվե. «Ո՛րտե արևը մտնի, ընտե պըտի մնաս»։ Բեռները վեր ածեցին, կշտին պառկան, ինքը դշերը բեռների բոլորը պտրտում էր։ Տեհավ մի մարդ ֆանարը ձեռին գալիս էր. էկավ, իրա կողքով անցկացավ, դպա գերեզմանները դնաց. տեհավ շըլակին մի զատ կա, քամակից յավա՛շ-յավա՛շ դնաց. հեռու կաղնավ, ըդրան թամաշա արեց։ Շլակի բանը վեր դրեց. մի քար շուռ տվեց, տեղը փորեց, էդ բանը դրեց տեղը։ Ֆողը վրա տվեց ու թողեց գնաց։

Ասեց.— Էս ապրանք ա՛, բերեցին, ըստե պահեցին, գնացին, էթամ՝ հաննմ։

Ֆողը ետ տվեց ու հանեց, տեհավ մի հատ աղջիկ ա, հոգին տրրփում ա, խանչալը իրեք, չորս տեղ տվել են։ Վեր կալավ, բերեց իրա բեռների մոտը. «Ո՛ր մեռնի, կտանեմ ֆորեմ».— Ասեց։ Բերեց շոր փռեց տակն, պառկացրեց, մի շոր էլ քաշեց երեսին։

Լիսը բացվեց, վե կացան թատարիք տենան, որ բեռները բարձեն. թամաշա արին մի հինդ հարուր ձիավոր, դահա շատ, քաղաքից դուս էկան, քաղաքի ղրաղին տաս-տաս, քսան-քսան էլան, ցվըրվան դըսպա հանդը, մի հինգ ձիավոր դուղ էկան քարվանի մոտը կաղնեցին, հարցրին.— Էս գշեր ըստե՞ղ իք։

Ասեցին.— Հա՛, ըստեղ ինք։

Ասեցին.— Թաքավորի աղջկան սպանել են, վե կալել տարե. բան ու ման չե՞ք տեհե ըստեղրանք։

Ասեցին.— Իրիկվորե ըստեղ ենք. բան չենք տեհե։

Էդ ձիավորները թողեցին գնացին։

Էդ տղեն ասեց.— Ինչ անեմ, թե էկան իմ կշտին գթան ըստրան, լեզու չունի, որ ասի, թե ինձ սպանող էս չի. ինձ կտանեն, կորցնեն։ Էսօր էլ կմնամ ըստի, թե մեռավ՝ կթաղեմ տեղը։

Էն գշերը մնաց, տեհավ, չէ՛, չի մեռնում. էն առավոտն էլ էն քաղաքը չմտավ, վեր կացավ, գնաց ուրիշ քաղաք, մի դուքան բռնեց, ապրանքը ածեց մեջը, էդ ախչկան տարավ պառկացրեց, ասեց.— Գողերը վրա են տվե, մեր հընկորը խանչալով յարալու են արե, ո՞վ կա սաղացնող։

Ասեցին.— Ըստե մի լավ հեքիմ կա։— Գնաց, հեքիմին գրթավ, բերեց դուքանը, հեքիմին ասեց.

— Խոստովանք պըտի պահես, էս ախչիկ ա։— Հեքիմը բաց արեց յարեքը, տեհավ։

Ասեց.— Ի՞նչ ուզես՝ կտամ, պըտի սաղացնես։

Հեքիմը սաղացրեց, ախչիկը բիրտեն աչքը բացեց, տեհավ. ահա, իրան կշտին հեքիմը ու մի տղա կա, ասեց.

— Ա՛յ տղա, դու ի՞նչ տղա ես։

Ասեց.— Ես բազրկյան եմ, էկա ձեր քաղաքի ղրաղր, դու պատահեցիր։

Ասեց.— Ես թաքավորի ախչիկն եմ. թաքավորը մի հատ վեզիր ուներ, ղրան մի տղա ուներ, սարաֆութուն կաներ, կգար մեր ամարաթները, կգար իմ օթախը, իմ հետ կխոսար չարի կես գիշեր, կես գիշերին կէթար, ինձ խոսք կգցեր։ Մեկ օր էլ շատ ինձ զոռեց, ես ըդրա վրա բարկացա, ասեցի. «Առավոտը թաքավորին կասեմ, որ քո գլուխը կտրի», էդ խոսքին խանչալը հանեց ու ինձ տվեց, էլ չեմ իմացե, ի՞նչ ա էլե։

Ասեց.— Քեզ թաղեց, հանեցի բերեցի ըստե, սաղացրի։

Ախչիկը ասեց.— Բեռները բարձ։, էթանք մեր քաղաք։

Բեռները բարձեցին, ընկան ճանապար, էկան իրանց քաղաքը։

Տարան ապրանքը վեր ածեցին իրանց դուքանի տղաքը, էկան էդ տղի տունը վեր էկան։

Ախչիկն տասնէրկու հատ անգին քար ուներ, ալ մահուտի վրա կարած. հանեց, տղին շանց տվեց, ասեց.

— Էս քարերը տենում ես, դու դինը չես գիտա, ես գիտամ, հատը հազար մանեթ ա՛ժի։ Մի հատը վե՛ կալ տար, էն դուքանների կշտին մի հատ սարաֆ կա, ընդրա վրա ծախա, որ ասի. «Դինն ի՞նչ ա», ասա. «Հինդ հարուր մանեթ ա», էն կհարցնի. «Էլ ունե՞ս», ասա. «Շատ ունեմ կշտիս, որ կուզես,— ասա,— արի՛ նշանց տամ»։ Վե՛ կալես, կբերես։

Իրիկունը սարաֆին վե՛ կալավ, բերեց տուն։

— Ախչի՛,— ասեց,— տղին բերել եմ, քարերը շանց տու, տենանք։

Բերեց, քարերը շանց տվեց, ասեց.— Մեկն որ ծախել ես, տասն մի հատ էլ կա։ Նստեք, հաց ուտենք, ետքը փողերը տուր, վեր կալ ու գնա։

Սարաֆը մտածեց, որ վեց հազար մանեթ ըսօր դատում ա, ուրախացավ. ասեց.

— Հաց չեմ ուտում, առեք փողերը՝ տվեք, ես էթում եմ մութն ա։

Ախչիկն էկավ, ասեց.— Հաց ա, կեր ու գնա։

Սարաֆը ասեց իրա միշին.— Կասես էն թաքավորի ախչիկը պըտի ըլի, որ սպանեցի, խոսալը, ժաժ գալը, ընդրա պես ա. մի քիչ նստեմ, խոսամ, վե՛ կենամ էթամ։

Էդ ախչիկը հաց քցեց, բերեց գինի դրեց. խմեցին, քեֆները մի քիչ լավացավ՝ էդ ախչիկը գնաց մի խանչալ հանեց, էկավ սարաֆի քամակին կաղնեց, մի խանչալ տվեց քամակիցը, սըրտիցը ծերը դուս էկավ։ Սարաֆը ընկավ ու մեռավ։

Տղեն ախչկան ասեց.— Խի՞ տվիր ըղրան։

Ասեց.— Իմ սպանողը էս էր, ես էլ իմ ինատը հանեցի, տղա՛,— ասեց,— ինձ որտիան հանեցիր, ըստրան էլ տանենք, ընտի թաղենք։ Մի փալասի մեջ կոլոլեցին ու վե՛ կալան, տարան, թաղեցին էնտեղ, որ ախչկան հանել էր։ Ետ դառան, էկան տուն։

Առավոտ լիսացավ, տղին ղրկեց մի ձեռք տղամարդի շոր բերի։

Գնաց վե՛ կալավ, բերեց։

Ախչիկը ասեց.— Ի՞նչ առարկա կա բազարումը։

Ասեց.— Վեզիրի տղա սարաֆին ման են գալի։

8—2573

Ասեց.— Գնա էրկու հատ ձի էլ բեր, նիլենք, էթանք, որ չրգան, նշանից գտնեն, մեզ կորցնեն։

Հեծան ու գնացին։

Ախչիկն ասեց.— Ա՛յ տղա, գի՞տաս, ուր պըտի էթանք։ էթանք Ստամբոլ, ընտե մի ժամանակ մնանք, էս առարկեն վերջանա, ետ դառնանք գանք։

Գնացին մի չոլ, յապանի տեղ վեր էկան, խուրձիններիցը հաց հանեցին, նստեցին, կերան։

Էդ ախչիկը նստավ ալ մահուտը լվաց, ասեց.— Ա՛յ տղա, ուշդ վրա պահա, ես էլ մի քիչ քնեմ։

Քնեց. տղեն թամաշա էր անըմ։

Տեհավ մի հատ ագռավ էկավ, էդ ալ մահըտի կշտին վեր էկավ, իմացավ միս էր, ի՛նչ էր, վե կալավ էդ ալ մահուտը, թռավ։ Տղեն տեհավ, որ տարավ մի դարի գլխին վեր դրեց. ձին նիլավ, ընկավ քամակը։ Գնաց, հասավ. էլի վե կալավ, թռավ, տարավ դահա հեռու. մեկ էլ գնաց, էլի ագռավ վե կալավ թռավ։ Մութն էլ ընկավ, կորցրեց ագռավին՝ ետ դառավ, ասեց։— էթամ ախչկան հասնեմ։

Էդ ախչիկը զարթնեց, տեհավ, ահա՛, կշտին մարդ չկա։

Ասեց.— Է՛յ բեհիթիպար տղա՛, էն նեղ տեղից ընձի ազատեց, իրա ամակին ախսոս չէկավ, էն քանի անգին քարի խաթեր վեր կալավ, գնաց։

Էդ ախչիկը ձին նիլավ դպա Ստամբոլ։ Գնաց ծովի ղրաղը գյամին նստեց, գնաց Ստամբոլա մեջը։ Գնաց, թեթև ղայֆի դուքան դրեց, ասեց.— Բալքի էդ տղեն էրևա, ետ դառնանք ղրպա մեր քաղաքը։

Տղեն էկավ, տեհավ ախչիկը չկա. ընկավ քաղաքները մանգալով, հարցնելով՝ չդթավ, ձին էլ ծախեց, կերավ, ասեց. «Փող չմնաց, Ստամբոլ էթամ»։

Մի մարդ ասեց.— Նոքար կըլլե՞ս։

Ասեց.— Կըլլեմ։

Ամիսը բարիշեցին տասը մանեթ։

Ամիսը թամամեց, ասեց.— Իմ տասը մանեթը տուր, ես էթամ։

Ասեց.— Դո՞ր ես էթում. մի ամիս էլ կաց, նո՛ր գնա։

— Անկարելի ա,— ասեց,— պըտի էթամ։

Ասեց.— Որ ըդենց ա, կացինը-սղոցը վե կալ, մի ծառ կա, կտրենք, նոր գնա։

Տղեն վե կալավ, գնաց ծառի տակը նստեց։

Տեհավ աղեն ետացավ, սկսեց կտրիլը։

Ծառը կտրվավ, վեր ընկավ։ Էդ ծառի գլխին մի ագռավի բուն կար. տեհավ ալ մահըտի վրա շարած անգին քարերը ըգրա միջին էր. ուրախացավ, վե կալավ դրեց ջեպը, ասեց.

— Ես ըսդրան ի ման դալի, գթա, հույս ունեմ ախչիկն էլ կգթնեմ։

Մեկ էլ տեհավ աղեն էլ էկավ, տեհավ ծառը կտրած։

Ասեց.— Ջորանա՛ս, վեր առ քու փողն, բարի ճանապար։

Փողն առավ, ընկավ ճանապար, գնաց. գնաց, ծովի ղրաղը հասավ, նստավ գյամին, դուս էկավ Ստամբոլ. ման էկավ, գնաց մի ղայֆանու դուքանում գթավ ախչկանը, ախչիկը ասեց.

— Բևհթիպար, մենծ բան էր որ անդին քարերը վե կալար գնացիր, ինձ թողեցիր էնտեղ։

Տղեն նստավ, ինչ որ էլել էր, պատմեց, ջիպիցը անդին քարերը հանեց, տվեց ախչկան։

Ախչիկը ասեց.— Մի ժամանակ ըստե մնանք, նոր կէթանք մեր երկիրը։

Թաքավորը վեզիրին կանչեց.— Վեզի՛ր,— ասեց,— արի ըստե։ Վեզի՛ր, իմ ախչիկը կորավ՝ իսկի սալըղ տվող չէլավ, քու տղեն էլ կորավ՝ սալըղ տվող չէլավ. մենք չիմացանք, մեր դուշմանը ով էր։

Վեզիրն ասեց.— Մեղ չեն ասի, քուչեքում կասեն. դարվիշի գեյիմ մտնենք, էթանք ման գանք, հարցնենք։

Թաքավորն ու վեզիրը վեր կացան, մտան դարվիշի գեյիմ, ման էկան։ Գնացին աշխարքը ման էկան, որտե հարցրին՝ սալըղ տվող չէլավ։ Գնացին, դուս էկան Ստամբոլ. էդ ախչկա ղայֆի առաջովը անց էին կենում. ախչիկը տեհավ, ճանաչեց. ասեց. «էս թաքավորն ա՝ իմ հերն ա, էս էլ վազիրն ա՝ սարաֆի հերն ա»։ Ձեն տվեց.

— Դարվիշ բաբա, ո՞ւր եք էթում։

Ասեցին.— Էթալու տեղ չունենք, ման ենք գալի։

Ասեց.— Համեցեք ըստե՝ ղայֆա էլ կա, չայ էլ կա, նարկիլա էլ կա, ինչ որ ուզեք, կա։

Մտան նեքսև, տարավ ըդոնց տեղ տվեց, ըդոնց պատվեց։ Դարվիշն ասեց.— Կերակուլ էլ կարա՞ս պատրաստի։

Ասեց.— Էս սահաթը կպատրաստեմ։

Կերակուրը պատրաստեց ու քաշեց ըդոնց աղաքը։ Մութն էլ ընկավ։ Դուռը շինեցին, էկան չորսով նստան ու հաց կերան։

— Դարվիշ բաբա՛,— ասեց,— արխային կերեք ու ըստե քնեք։

Կերան ու պրծան, ախչիկն ասեց.— Դարվիշ բաբա՛, երկար գշեր ա, դու աշխարք ման եք էկե, մի բան ասեք, անկաչ անենք։

Ասեց.— Մենք բեզարած ենք, դուք ասեք։

Ասեց.— Ես մի թեթև բան գիտամ, ասե՛մ։

Սկսեց գլխիցը. մոնց որ էլել էր, ընենց պատմեց. ասեց.

— Դու թաքավոր ես, էս էլ քու վազիրն ա, ես էլ քու ախչիկն եմ, էս էլ ինձ պրծացնող տղեն ա։

Քնեցին. առավոտը վեր կացան, ընկան ճանապարհ, էկա՛ն, իրանց քաղաքը դուս էկան։

Էն վազիրին ղուս արեց, ասեց.— Դու իմ դուշմանն ես զաթի, էն ախչիկն ու տղեն ինչդար իրար հետ ման են էկե, իրար հետ քվոր, ախպոր պես են էլե։

Թաքավորը ջխտին էլ կանչեց աղաքը, կաղնացրեց, ասեց.

— Որդի՛, իմ կորածը ո՛ր ես քթա, ըդրա պատճառը դու ես էլե, իմ ձեռով էս ախչիկն էլ տալիս եմ քեզ։

Նշան դրեց, օխտն օր հարսանիք արեց։